ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-21-9/26-1

ք. Երևան 01-ը սեպտեմբերի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս **ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի**, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»,** մի կողմից, և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Վաճառող»** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***13,227,050 (տասներեք միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակի: Վճարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:***

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը**:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011144129 ՀՎՀՀ 02522157 ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ Ք. Երևան, Արզումանյան 32-10 «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ Հ/Հ 217002182558001 ՀՎՀՀ 01210095 տեսուչ
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-9/26-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի						
Հ/հ	**անվանումը**	**տեխնիկական բնութագիր**	**ապրանքային նշանը**	**արտադրողի անվանումը**	**մակնիշը**	**ֆիրմային անվանումը**
1	Լվացող լուծույթ 1000 ml	1x1000 մլ, 15-25 ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորմամբ, նախատեսված է Cobas Integra 400+ լաբորատոր անալիզատորի համար	cobas Integra Cleaner	Roche Diagnostics	cobas Integra Cleaner	cobas Integra Cleaner
2	Գլյուկոզա 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ձևաչափ՝ 4x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	Glucose 400T c111	Roche Diagnostics	Glucose 400T c111	Glucose 400T c111
3	Ընդհանուր սպիտակուց 400թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ձևաչափ՝ 4x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 15-25C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	Total Protein 400T c111	Roche Diagnostics	Total Protein 400T c111	Total Protein 400T c111
4	Բիլիռուբին ընդհանուր 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ձևաչափ՝ 4x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	BIL-T Gen.3, 400 Tests C111	Roche Diagnostics	BIL-T Gen.3, 400 Tests C111	BIL-T Gen.3, 400 Tests C111
5	Բիլիռուբին ուղղակի 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ձևաչափ՝ 2x50 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	BIL-D Gen.2, 100Tests, cobas c111	Roche Diagnostics	BIL-D Gen.2, 100Tests, cobas c111	BIL-D Gen.2, 100Tests, cobas c111
6	NaCl Լուծիչ 9%	Լրակազմում 48 մլ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ձևաչափ՝ 4x12 մլ, 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	NaCL 9% c111	Roche Diagnostics	NaCL 9% c111	NaCL 9% c111
7	Դեպրոտեինայզեր 2x 11 մլ	Լրակազմում 22 մլ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ձևաչափ՝ 2x11մլ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	ISE DEPROTEINIZER c111	Roche Diagnostics	ISE DEPROTEINIZER c111	ISE DEPROTEINIZER c111
8	Միկրոկյուվետներ	Լրակազմում 1680 կյուվետ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ձևաչափ՝ 1680 կյուվետ: Գործարանային փաթեթավորումով տուփ	Micro Cuvette Segment	Roche Diagnostics	Micro Cuvette Segment	Micro Cuvette Segment
11	D-Դիմեր 10 թեստ	Լրակազմում 10 թեստ նախատեսված Կոբաս h232 անալիզատորի համար՝ Ձևաչափ՝ 10 թեստ, ներառված է նաև կոդը, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ	Roche Cardiac D-Dimer 10 Tests (cobas)	Roche Diagnostics	Roche Cardiac D-Dimer 10 Tests (cobas)	Roche Cardiac D-Dimer 10 Tests (cobas)
12	Ստուգիչ Control D-Dimer	Լրակազմում 2մլ նախատեսված Կոբաս h232 անալիզատորի համար՝ Ձևաչափ՝ 2x1 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ	Roche CARDIAC D-Dimer Control (cobas)	Roche Diagnostics	Roche CARDIAC D-Dimer Control (cobas)	Roche CARDIAC D-Dimer Control (cobas)

13	Ռեագենտ UF II Pack Bac (2x2.1L)	Լրակազմում 2x2.1 լ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է UF500 անալիզատորի շահագործումը ապահովելու համար	UF II Pack Bac (2x2.1L)	Sysmex	UF II Pack Bac (2x2.1L)	UF II Pack Bac (2x2.1L)
14	Ռեագենտ UF II Pack Sed (2X2.1L)	Լրակազմում 2 x 2.1 լ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է UF500 անալիզատորի շահագործումը ապահովելու համար	UF II Pack Sed (2x2.1L)	Sysmex	UF II Pack Sed (2x2.1L)	UF II Pack Sed (2x2.1L)
17	Ռեագենտ UF II Sheath 20L	Լրակազմում 20լ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է UF500 անալիզատորի շահագործումը ապահովելու համար	II Sheath 20L	Sysmex	UF II Sheath 20L	UF II Sheath 20L
21	Թրոմբին 10 x 5 ml	Լրակազմում 10 x 5 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	THROMBIN (100 NIH) 10 x 5 ML	Sysmex (Siemens)	THROMBIN (100 NIH) 10 x 5 ML	THROMBIN (100 NIH) 10 x 5 ML
22	ԱՊՏԺ ActinFS 10 x 10 ml	Լրակազմում 10 x 10 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	ACTIN FS 10 x 10 ML	Sysmex (Siemens)	ACTIN FS 10 x 10 ML	ACTIN FS 10 x 10 ML
23	Կալցիումի քլորիդի լուծույթ CaCl2 24x 15ml	Լրակազմում 24 x 15 մլ, 2-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Start 4 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	STA CACL2 0,025M	Diagnostica Stago	STA CACL2 0,025M	STA CACL2 0,025M
24	Իննովին 10 x 10 ml	Լրակազմում 10 x 10 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	INNOVIN 10 x10 ML	Sysmex (Siemens)	INNOVIN 10 x10 ML	INNOVIN 10 x10 ML
25	PTմուլտի կալիբրատոր 6 x 1 ml	Լրակազմում 6 x 1 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	PT MULTICALIBRATOR 6 x 1 ML	Sysmex (Siemens)	PT MULTICALIBRATOR 6 x 1 ML	PT MULTICALIBRATOR 6 x 1 ML
26	Ստուգիչ հեղուկ CiTrol1-E 10 x 1ml	Լրակազմում CiTrol1-E 10 x 1 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	CI-TROL 1 E 10 x 1 ML	Sysmex (Siemens)	CI-TROL 1 E 10 x 1 ML	CI-TROL 1 E 10 x 1 ML
27	Ստուգիչ հեղուկ CiTrol2-E 10 x 1ml	Լրակազմում CiTrol2-E 10 x 1 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	CI-TROL 2 E 10 x 1ML	Sysmex (Siemens)	CI-TROL 2 E 10 x 1ML	CI-TROL 2
29	Լվացող հեղուկ	CAClean 1 x 50 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	CA-CLEAN I 50 ML	Sysmex	CA-CLEAN I 50 ML	CA-CLEAN I 50 ML
35	Էստրադիոլ 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Estradiol III RackPack	Roche Diagnostics	Estradiol III RackPack	Estradiol III RackPack

43	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն -PSA	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Total PSA Elecsys cobas e 100 V3	Roche Diagnostics	Total PSA Elecsys cobas e 100 V3	Total PSA Elecsys cobas e 100 V3
44	Բետա խորիոն գոնադոտրոպին	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	HCG+beta II Elecsys, cobas e	Roche Diagnostics	HCG+beta II Elecsys, cobas e	HCG+beta II Elecsys, cobas e
55	Հեպատիտ B Anti-HBc 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Elecsys® Anti-HBc II immunoassay 100 tests	Roche Diagnostics	Elecsys® Anti-HBc II immunoassay 100 tests	Elecsys® Anti-HBc II immunoassay 100 tests
60	Պրոլակտին CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Prolactin CS Gen.2 Elecsys, cobas e	Roche Diagnostics	Prolactin CS Gen.2 Elecsys, cobas e	Prolactin CS Gen.2 Elecsys, cobas e

Ծանոթություն.

Ապրանքները պետք է ունենան.

1.Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքներ
2.Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP կամ այլ):
3.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:
4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:
5. Մատակարարման վայր սահմանել ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բժշկական բազա:
****թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատկարարման ժամանակ***

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	մատակարարումը՝ 2021թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2021թ.
1	Լվացող լուծույթ 1000 ml	հատ	2	13,700	27,400	2
2	Գլյուկոզա 400 թեսթ	լրակազմ	15	18,000	270,000	15
3	Ընդհանուր սպիտակուց 400թեսթ	լրակազմ	15	22,000	330,000	15
4	Բիլիռուբին ընդհանուր 400 թեսթ	լրակազմ	20	33,200	664,000	20
5	Բիլիռուբին ուղղակի 100 թեսթ	լրակազմ	20	16,500	330,000	20
6	NaCl Լուծիչ 9%	լրակազմ	10	17,050	170,500	10
7	Դեպրոտեինայզեր 2x 11 մլ	լրակազմ	20	7,660	153,200	20
8	Միկրոկյուվետներ	լրակազմ	20	58,000	1,160,000	20
11	D-Դիմեր 10 թեստ	լրակազմ	15	57,000	855,000	15
12	Ստուգիչ Control D-Dimer	լրակազմ	5	49,500	247,500	5
13	Ռեագենտ UF II Pack Bac (2x2.1L)	լրակազմ	5	135,000	675,000	5
14	Ռեագենտ UF II Pack Sed (2X2.1L)	լրակազմ	5	139,050	695,250	5
17	Ռեագենտ UF II Sheath 20L	լրակազմ	10	108,000	1,080,000	10
21	Թրոմբին 10 x 5 ml	լրակազմ	10	73,800	738,000	10
22	ԱՊՏԺ ActinFS 10 x 10 ml	լրակազմ	10	131,400	1,314,000	10
23	Կալցիումի քլորիդի լուծույթ $CaCl_2$ 24x 15ml	լրակազմ	10	37,000	370,000	10
24	Իննովին 10 x 10 ml	լրակազմ	10	57,600	576,000	10
25	PTմուլտի կալիբրատոր 6 x 1 ml	լրակազմ	1	118,400	118,400	1
26	Ստուգիչ հեղուկ CiTrol1-E 10 x 1ml	լրակազմ	15	32,000	480,000	15
27	Ստուգիչ հեղուկ CiTrol2-E 10 x 1ml	լրակազմ	1	32,000	32,000	1
29	Լվացող հեղուկ	հատ	20	20,700	414,000	20
35	Էստրադիոլ 100 թեսթ	լրակազմ	4	57,000	228,000	4
43	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն -PSA	լրակազմ	10	84,500	845,000	10
44	Բետա խորիոն գոնադոտրոպին	լրակազմ	3	64,600	193,800	3
55	Հեպատիտ B Anti-HBc 100 թեսթ	լրակազմ	15	76,000	1,140,000	15
60	Պրոլակտին CS	լրակազմ	4	30,000	120,000	4
Ընդամենը					**13,227,050**	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱՀ 0337548

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-9/26-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի			
չ/հ	CPV և ապրանքի անվանումները	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ պետական բյուջեի 2021թ. հատկացումների հաշվին, 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝
1	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Լվացող լուծույթ 1000 ml	33691167/14	27,400
2	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Գլյուկոզա 400 թեսթ	33691423/63	270,000
3	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ընդհանուր սպիտակուց 400թեսթ	33691423/64	330,000
4	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Բիլիռուբին ընդհանուր 400 թեսթ	33691423/66	664,000
5	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Բիլիռուբին ուղղակի 100 թեսթ	33691423/67	330,000
6	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/NaCl Լուծիչ 9%	33691423/84	170,500
7	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Դեպրոտեինայզեր 2x 11 մլ	33691423/87	153,200
8	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Միկրոկյուվետներ	33691423/88	1,160,000
11	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/D-Դիմեր 10 թեստ	33691423/90	855,000
12	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ստուգիչ Control D-Dimer	33691423/93	247,500
13	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ռեագենտ UF II Pack Bac (2x2.1L)	33691423/95	675,000
14	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ռեագենտ UF II Pack Sed (2X2.1L)	33691423/96	695,250
17	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ռեագենտ UF II Sheath 20L	33691423/99	1,080,000
21	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Թրոմբին 10 x 5 ml	33691423/103	738,000
22	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/ԱՊՏԺ ActinFS 10 x 10 ml	33691423/104	1,314,000
23	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կալցիումի քլորիդի լուծույթ $CaCl_2$ 24x 15ml	33691423/105	370,000
24	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Իննովին 10 x 10 ml	33691423/106	576,000
25	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/PTմուլտի կալիբրատոր 6 x 1 ml	33691423/108	118,400
26	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ստուգիչ հեղուկ CiTrol1-E 10 x 1ml	33691423/109	480,000
27	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ստուգիչ հեղուկ CiTrol2-E 10 x 1ml	33691423/110	32,000
29	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Լվացող հեղուկ	33691162/43	414,000
35	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Էստրադիոլ 100 թեսթ	33691423/124	228,000
43	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն -PSA	33691423/135	845,000
44	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Բետա խորիոն գոնադոտրոպին	33691423/136	193,800
55	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հեպատիտ B Anti-HBc 100 թեսթ	33691423/152	1,140,000
60	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Պրոլակտին CS	33691423/160	120,000
Ընդամենը			**13,227,050**

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱԼ 0337578

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-21-9/26-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ԳՀԱՊՁԲ-21-9/26-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն